

Կ Ա Ր Գ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած, ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործողների տնօրինման տակ գտնվող և օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված երկրաբանական տեղեկությունները լիազոր մարմինն հանձնելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Երկրաբանական տեղեկությունը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը (այսուհետ՝ լիազոր մարմին) հանձնվում է անհատույց:

3. Անկախ ֆինանսավորման աղբյուրից՝ պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած երկրաբանական տեղեկության (սյուժերի) երկու օրինակը (համակարգչային ձևավորմամբ կազմված երկու թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները) և օգտակար հանածոների պաշարների վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության կողմից 10-օրյա ժամկետում փոխանցվում են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. Լիազոր մարմինն են հանձնվում ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում ձեռք բերված ընդերքի երկրաբանական կառուցվածքի, ընդերքում պարունակվող օգտակար հանածոների, հանքավայրերի երկրաբանական տվյալների, պաշարների չափի, վերամշակման պայմանների, ինչպես նաև ընդերքի այլ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկությունները (թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները), որոնք պարունակվում են երկրաբանական հաշվետվություններում, քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում:

5. Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործողների տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը լիազոր մարմինն է հանձնվում 3 ամսվա ընթացքում:

6. Լիազոր մարմինը սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերի հանձնման դեպքում տալիս է դրանց ընդունման մասին տեղեկանք՝ համաձայն ձևի:

7. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների (այսուհետ՝ պատվիրատու) կողմից լիազոր մարմինն են հանձնվում օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում ստացված հետևյալ տեղեկությունները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերը.

2) վտանգավոր արտածին երկրաբանական երևույթների ուսումնասիրությունների հետ կապված ինժեներաերկրաբանական հետազննությունների արդյունքները.

3) սեյսմամիկրոշրջանացման համար ինժեներաերկրաբանական, ջրաերկրաբանական և երկրաֆիզիկական հետազննությունների արդյունքները.

4) նավթի և գազի ստորերկրյա պահեստարանների տեղադրման և վտանգավոր թափոնների թաղման համար ինժեներաերկրաբանական հետազննությունների արդյունքները.

5) արտաձին երկրաբանական երևույթների մշտադիտարկումների արդյունքները,

6) պետական ծրագրերով իրականացված հետազոտությունների արդյունքները,

7) միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) շրջանակներում և գիտա-
հետազոտական նպատակներով իրականացված հետազոտությունների արդյունքները:

8. Պատվիրատուն սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկություններն ստանալուց
հետո մեկ ամսվա ընթացքում այն թղթային և էլեկտրոնային տարբերակներով հանձնում է
լիազոր մարմին: Երկրաբանական տեղեկություն պարունակող նյութերի բովանդակությանը
ներկայացվող պահանջները և դրանց ներկայացման ձևերը հաստատում է լիազոր մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Էներգետիկայի և բնական
պաշարների նախարարություն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N

_____ 20 թ.

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ

Տրվում է _____,
(կազմակերպության անվանումը)

որը ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը մշտական
պահպանության է հանձնել

(երկրաբանական տեղեկության անվանումը)

(հեղինակները, թողարկման տարեթիվը, միավորների քանակը)

(գրքեր, տետրեր, ավրոմներ, թղթապանակներ և այլն)

(ստորագրությունը)